<<ՀՐԱԲԽԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ>>

Ուսուցումներ՝ Շրիլա Բհակտիդայիտա Մադհավա Գոսվամի Մահարաջի կյանքից

Հեղինակ՝ Շրիլա Բհակտիվիգյանա Բհարատի Գոսվամի Մահարաջ (գրքի հեղինակը Շրիլա Բհակտիդայիտա Մադհավա Մահարաջից հարինամ եւ դիքշա հաղորդությունները ստացած աշակերտն է)

Վերնագիր` <<Հոգեւոր պրակտիկաները>>

<<Ծննդյան օրը տոնելու պատշաճ ձեւը>>

Մի անգամ, երբ Գուրու Մահարաջը (Շ. Բհակտիդայիտա Մադհավա Գոսվամի Մահարաջը) իր հայտնության տոնի առթիվ Վրինդավանում էր, Շրիլա Բհակտիվինոդ Թակուրի կողմից գրված այս կիրտանը երգեց. «Ամարա ջիվանա, սադա պապե րատա, նաիիկո պունյէրա լեշա պարերե ուդվեգա, դիյաչի ջե կատո, դիյաչի ջիվերե կլեշա» (Շարանագատի 1.4.1)

«Կյանքս մշտապես մեղքին է ուղղված, եւ այդ պատճառով ես բարեպաշտության նշույլ անգամ չունեմ: Ուրիշներին մեծ անհանգստություն եւ միայն դժբախտություն եմ բերել»:

Գուրու Մահարաջի (Շ. Բհակտիդայիտա Մադհավա Գոսվամի Մահարաջի) մեղեդային եւ սրտաջերմ ձայնն այնքան հուզիչ էր, որ այնտեղ հավաքված բոլոր նվիրյալները սկսեցին արտասվել: Այս կիրտանը կատարելուց հետո նա

դիմեց ունկնդիրներին. «Այսօր Ուտթանա Էկադաշին է՝ այն օրը, երբ Տերը քառամյա քնից արթնանում է: Այս օրը նաեւ իմ պարամ-գուրուդեւի՝ Շրի Շրիմադ Գաուրա-Կիշոր դաս Բաբաջի Մահարաջի հեռանալու օրն է: Մյուս նվիրյալները Շրիլա Բաբաջի Մահարաջին այսօր արդեն ահագին փառաբանել են, ուստի ես այժմ, օգտվելով այս հնարավորությունից, աղոթում եմ պարամ-գուրուդեվից, որպեսզի ստանամ նրա եւ նրա ամենաթանկ աշակերտի՝ իմ ամենապաշտելի Գուրու Մահարաջ Շրի Շրիմադ Բհակտիսիդդհանտա Սարասվատի Թակուր Պրաբհուպադի ողորմածությունը:

1903 թ.-ի այս օրը Ֆարիդպուրի շրջանի Կանչանապադա գյուղում (ներկայիս Արեւելյան Պակիստանում) ծնվեցի ես:

Շրի Ռամաչանդրայի, Շրի Կրիշնայի, Շրիմատի Ռադհիկայի եւ Շրի Չեյտանյա Մահապրաբհուի ծննդյան արարողությունների նկարագրություններում մենք տեսնում ենք, թե ինչպես էին Շրի Ռամաչանդրայի հայր՝ Շրի Դաշարաթ Մահարաջը, Շրի Կրիշնայի հայր՝ Շրի Նանդա Բաբան, Շրիմատի Ռադհիկայի հայր՝ Շրի Վրիշաբհանու Մահարաջը, Շրի Չեյտանյա

Մահապրաբհուի հայր՝ Շրի Ջագաննաթ Միշրան, իրենց զավակների համար ծառայում Տիրոջ աստվածություններին, բրահմաններին, իրենց ազգականներին եւ բոլոր կենդանի էակներին՝ նրանց առաջարկելով ուտելիք, կովեր, զարդարանքներ, քաղցրավենիք, նվիրատվություններ եւ զանազան այլ բաներ: Բացի այդ, նրանք իրենց զավակներին սովորեցնում էին, որ մարդն իր ծննդյան օրը պարտավոր է իր ավագների ողորմածությունը խնդրել, դիպչել նրանց ոտնաթաթերին, աղոթել նրանց եւ լսել, թե ինչպիսի փործով են վերջիններս կիսվում»:

Հնդկաստանում մինչ օրս գրեթե ամենուրեք հետեւում են վեդայական այս էթիկետին:

«Մայրս ինձ շատ վաղուց էր սովորեցրել, թե մարդն ինչպես պետք է նշի իր ծննդյան տարեդարձը: Նա ասում էր, որ ծնվելու օրը մարդուն բանտարկում են կոպիտ եւ նուրբ մարմինների մեջ, որպեսզի նա իր նախկին կարմայի հետեւանքներից տառապի: Այդ տառապանքը մարդու վարքի համաձայն նվազեցվում է կամ էլ ավելացվում: Պայմաններով սահմանափակված հոգիներն իրենց ծննդյան

օրը չպետք է դիտարկեն որպես կոպիտ եւ նուրբ մարմնի բանտում շղթայված՝ երջանկորեն մնալու հնարավորություն: Փոխարենը նրանք պետք է, օգտվելով այդ օրվա հնարավորությունից, ծառայեն եւ աղոթեն այս աշխարհից ազատագրվելու համար կամ, գոնե, զղջումով աղոթեն, որպեսզի ընդունակ դառնան այս աշխարհի տառապանքներին դիմանալ: Նրանք այդ օրը պետք է ուրախանան միայն այն պարագայում, եթե Շրի Հարիին ծառայելու հնարավորություն ստանան: Մյուս կողմից, ազատագրված հոգիներն իրենց ծննդյան օրը ինքնստինքյան երջանիկ են, որովհետեւ այդ օրը նրանց համար հնարավորություն է նշելու եւ հիշելու այն տարիները, որոնց ընթացքում նրանք իրենց պաշտելի Տիրոջն այս աշխարհում ծառայել են: Նրանք այստեղ չեն եկել, որպեսզի նախկին կարմայի ռեակցիաներից տառապեն: Իրականում այս աշխարհում նրանց միակ նպատակը պայմաններով սահմանափակված հոգիներին տգիտության խավարից ազատելն է՝ գիտելիքի ջահի լույսով հոգեւոր ճանապարհը լուսավորելով: Այս աշխատանքի համար Բհագավանը նրանց պրեմայով է վարձատրում:

Այսօր՝ ծննդյանս օրը, իմ պարտքն է երկրպագել

շրի գուրուին: Շրի գուրուն ինձ համար արտահայտվում է 4 ձեւով: Առաջինը նա է, ով ոչնչացնում է իմ տգիտությունը: Քանի որ Բհագավանն անսահմանափակ գիտելիքի աղբյուր է, Նա գուրու-տատտվայի արմատն է, այսպիսով Նա արտահայտվում է որպես չայտյա-գուրու: Հետեւաբար այսօր ես պարտավոր եմ Նրան երկրպագել: Շրի գուրուի երկրորդ արտահայտումը դա Շրիլա Պրաբհուպադն է՝ ողջ աշխարհով մեկ կանգնեցված Շրի Չեյտանյա մաթերի եւ Գաուդյա մաթերի հիմնադիրը, ով ինձ անձամբ ներգրավեց Տիրոջը ծառայելու մեջ եւ այդպիսով կյանքիս իմաստ հաղորդեց: Շրի գուրուի երրորդ արտահայտումը համարում եմ վայշնավներին, հատկապես Շրիլա Պրաբհուպադի աշակերտներին՝ որպես շրի գուրուի անձնավորված արտահայտում, քանի որ ի շնորհիվ նրանց ես է՛լ ավելի շատ եմ հիշում Շրիլա Պրաբհուպադի վարքը, ցուցումները, ուսուցումները եւ նրա սրտի ցանկությունները: Չորրորդը աշակերտներիս եմ որպես իմ գուրու համարում, որովհետեւ, միշտ շուրջս գտնվելով, ինձ հետ միասին բնակվելով եւ ակնկալելով ինձանից լինել պատշաճ վարքագծի օրինակելի մոդել՝ նրանք ինձ պարտավորեցնում են ճիշտ

վարքագիծ դրսեւորել եւ տեղիք են տալիս, որպեսզի ես խորապես ուշադրություն դարձնեմ յուրաքանչյուր գործողությանս վրա:

Ինձ գովացողի եւ շողոքորթողի հետ շփումից ես երբեք բարիք չեմ ստանա: Նման շփումը թողնելով՝ ես միշտ կմնամ այն մարդկանց շրջապատում, ովքեր, մատնացույց անելով սխալներս, ինձ ցուցումներ են տալիս:

Քանի որ աշակերտներիս որպես իմ գուրուների եմ դիտարկում, նրանց ծառայելու բնական հակվածություն ունեմ: Ես հիմար չեմ, որ բարձր աթոռին նստեմ եւ պաշտամունքիս առարկաներից իմ անձի համար երկրպագություն ընդունեմ: Եթե այդպես վարվեի, ոչ մի պուջա էլ չէր լինի: Փոխարենը, երբ տեսնում եմ, որ գուրուներս ցանկություն ունեն ծննդյանս օրը ինձ երկրպագել, սիրուց դրդված՝ ես պարտավոր եմ ծառայել նրանց՝ այդ երկրպագությունն ընդունելով, քանի որ նրանք իմ երկրպագության օբյեկտն են, եւ ես պարտավոր եմ նրանց ծառայել՝ նրանց կամքով շարժվելով: Այսպիսով, երկրպագության եւ օրհնությունների միջեւ տարբերություն չկա: Ինձ երկրպագություն առաջարկելով՝ նրանք ինձ

օրհնում են այն բանով, որ ես կարողանում եմ գոհացնել նրանց՝ նրանցից երկրպագությունն ընդունելու ծառայությանս միջոցով: Իմ առջեւ կիրտան կատարելով՝ նրանք ինձ հնարավորություն են ընձեռում ծառայել իրենց՝ շրավան կատարելով (լսելով):

Թեեւ աշակերտներս իմ գուրուներն են, նրանց հանդեպ իմ ունեցած մեծ սերն ինձ երբեմն ստիպում է նրանց ցուցումներ տալ եւ կշտամբել, ճիշտ այնպես, ինչպես Նանդա Բաբան եւ Յաշոդա Մաիյան պատժում էին Գերագույն Տեր Շրի Կրիշնային, Նրան կարգադրություններ էին տալիս եւ անգամ կապում: Քանի որ Նանդան եւ Յաշոդան Կրիշնայի հանդեպ շատ խորը սեր են տածում, Տիրոջ առջեւ հնազանդություն ցուցաբերելու տրամադրությունը մնում է սիրող հոր եւ մոր սիրով լի տրամադրության ստվերում: Մի կողմից Գուրուն հեղինակավոր անձ է, իսկ մյուս կողմից՝ նա իր աշակերտի ամենամտերիմ ընկերն ու բարեկամն է: Պաշտպանող եւ պաշտպանված լինելու հասկացությունները միեւնույն ժամանակ առկա են Տիրոջ մաքուր նվիրյալների մեջ: Երբեմն, ըստ կարիքի, այս երկու տրամադրություններից մեկի ազդեցությունը մյուսից գերակշռում է, իսկ

երբեմն էլ՝ հակառակը: Այսպիսով, սխալ չի համարվի, եթե ծառան, իր ունեցած խորը սիրուց դրդված, իր ծառայության օբյեկտին կշտամբի կամ ցուցումներ տա:

Այսօր մեջս պաշտպանվածի դիրքում գտնվողի խորը տրամադրությունն է արթնացել, քանզի դուք բոլորդ ինձ պաշտպանում եք՝ ինձ ձեր ամենաողորմած օրհնությունները շնորհելով:

Մենք անձամբ ականատեսն ենք եղել այն բանի, թե ինչպես էր Շրիլա Պրաբհուպադն անցկացնում իր հայտնության օրը՝ վայշնավներին իր երախտագիտությունն ու ծառայությունն առաջարկելով: Այսօր, օգտվելով այս հնարավորությունից, ես ձեզ բոլորիդ կծառայեմ եւ երախտագիտությունս կհայտնեմ, որ ձեր օրհնությունները շարունակաբար սփռում եք վրաս: Նրանք, ովքեր ինձ այսօր երկրպագեցին, պետք է իմանան, որ իրականում նրանք իմ գուրուդեւին են երկրպագել, ով ողջ աշխարհի երկրպագության իրական օբյեկտն է: Շրի գուրուին ծառայելը նույնքան լավ է, որքան Բհագավանին ծառայելը»:

Այդ ժամանակ Գուրու Մահարաջն անձամբ դանդավատ-պրանամներ, սանդալի մածուկ,

ծաղկաշղթաներ, հագուստ եւ նվիրատվություններ առաջարկեց՝ սկզբում իր հոգեւոր բոլոր եղբայրներին, ովքեր ներկա էին, այնուհետեւ՝ բոլոր պանդաներին (բրահման հոգեւորականներին):

Երբ ինչ-որ մեկն ասում էր. «Այսօր քո հայտնության օրն է, խնդրում եմ, ողորմած եղիր իմ հանդեպ», Գուրու Մահարաջը պատասխանում էր. «Ես ուշադրություն չեմ դարձնում՝ ծննդյանս օրն է, թե մեկ այլ օր է: Անգամ եթե ծննդյան օրն է, մարդը պարտավոր է իր ծննդյան օրը սադհուներին ծառայել, եւ, քանի դեռ ես գիտակցորեն գիտակից եմ, չեմ ցանկանում բաց թողնել վայշնավներին ծառայելու գեթ մեկ հնարավորություն: Ես վայշնավա-սեւա կատարելու համար ծնունդիս օրը որպես պատրվակ եմ օգտագործում:

Քանի որ վայշնավներն իրենց համար ոչինչ չեն ցանկանում ընդունել, նրանց ծառայելու համար որեւէ պատրվակ է պետք գտնել»:

Գուրու Մահարաջը մի յուրահատկություն ուներ. նա հրավիրում եւ հարգանք էր առաջարկում անգամ Գոսաիներին, ովքեր Գաուդյա Մաթին սկզբունքայնորեն դեմ էին՝ նրանց

հնարավորություն ընձեռելով լսել Գաուդյա Մաթի մաքուր, անապական ուսուցումները: Գուրու Մահարաջն ասում էր մեզ. «Վայշնավները մեր պաշտամունքի առարկաներն են: Մենք պետք է նրանց դանդավատ-պրանամ առաջարկենք, ինչպես նաեւ ցանկացած բան, որը կարող ենք նրանց առաջարկել: Այս էթիկետը մենք Շրիլա Պրաբհուպադի վարքագծին նայելով ենք սովորել: Այստեղ ներկա գտնվող որոշ վայշնավներ, հատկապես հոգեւոր եղբայրներիս աշակերտները, ասես իմ աշակերտները լինեն: Այդ իսկ պատճառով նրանք կտարակուսեն ինձանից որեւէ բան ընդունել, եթե նրանց պրանամ եմ առաջարկելու: Հետեւաբար դու՛ք պետք է այս բոլոր իրերը առաջարկեք նրանց՝ ինչպես որ ես եմ առաջարկել հոգեւոր եղբայրներիս՝ հարգանքով եւ պատշաճ էթիկետով: Որոշ վայշնավներ այնպիսի հեռու տեղերից են եկել, ինչպիսիք են Նանդագրամը, Գովարդհանը, Կամային, Կարեհլան, Կիշորի-կունդան եւ այլն, եւ մեծ գումարներ են ծախսել այստեղ գալու համար: Նրանց նվիրատվություններն այնպես տվեք, որ ճամփորդության իրենց ծախսերը փակելուց հետո նրանց ձեռքում գումար մնա:

Վայշնավներին ծառայելու հարցում երբեք ժլատ մի եղեք»:

«Երիտասարդ տարիքում ստացած հոգեւոր տպավորությունները»

Երբեմն, երբ Գուրու Մահարաջը տեսնում էր, որ ինչ-որ ծնող իր երեխայի հետ է, նրան ցուցումներ տալու ենթատեքստի տակ իր մանկությունից էր պատմում: Գուրու Մահարաջն ասում էր. «Երբ ընդամենը 4 տարեկան էի, հայրս՝ Շրի Նիշիկանտա Դեվաշարմա Բանդոպադհյայը, լքեց այս աշխարհը, իսկ մայրս՝ Շրիմատի Շայվալինի Դեվին, լի էր նվիրվածությամբ եւ սադհուներին ծառայելու ուժեղ հակում ուներ: Նա ինձ՝ իր միակ որդուն, իր եղբայրների տանն էր մեծացնում: Քանի որ նա Տիրոջ նվիրյալն էր, երբ սուրբ գրվածքներից էր կարդում, միշտ այնպես էր անում, որ ես լսեի, եւ ինձ Բհագավադ-գիտայից ամեն օր մի քանի քառյակներ էր սովորել տալիս: Արդյունքում՝ ես 11 տարեկանում ողջ Բհագավադ-գիտան անգիր գիտեի: Բացի այդ, նա կանոնավոր կերպով ինձ այլ սուրբ գրվածքների հիմնական ուսուցումներն էր սովորեցնում ու պատմում, եւ դրա շնորհիվ ես

դրանք անգիր արեցի: Մորս նվիրված ծառայություններից սրտումս մնացած այդ տպավորություններս հետագայում հոգեւոր ուղղով գնալուս խթանը դարձան: Նվիրյալի ընտանիքում ծնվելը օրհնություններից մեծագույնն է: Շրիլա Բհակտիվինոդ Թակուրն իր կիրտանում գրել է.

ջանմաօբի մոէ իչչհա ջադի տորա բհակտա-
գրիհե ջանի ջանմա հաու մորա
(«Շարանագատի», 2.3.4)

«Ով Տե՛ր, եթե ցանկանում ես, որ ես կրկին ծնվեմ այս աշխարհում, ապա թող որ նվիրյալիդ տանը ծնվեմ»: Մեր օրերում, Կալի-յուգայի ազդեցության պատճառով, մարդիկ հետաքրքրված չեն իրենց երեխաներին հոգեւոր թեմաներ ուսուցանելով եւ, դժբախտաբար, նման թեմաները ժամանակի կորուստ են համարում: Մենք պետք է մարդկանց խնդրենք, հատկապես նվիրյալներին, որպեսզի նրանք իրենց երեխաներին այնպես սովորեցնեն, որ վերջիններս մնայուն հոգեւոր օգուտ ստանան՝ նիտյադհարմայի (հավիտենական դհարմայի) հանդեպ կապվածություն զարգացնելով: Երեխայի սիրտը կավի պես է, որն, ըստ

կավագործի ունեցած հմտության, համապատասխան ձեւ է ստանում»:

«Խորը մտահոգություն ուրիշների մասին»

Երբ Շրի Չեյտանյա Գաուդյա Մաթը նոր տպագրություններ էր հրատարակում, Գուրու Մահարաջն իր մանկությունից մի պատմություն էր պատմում՝ մարդկանց ոգեւորելու համար, որպեսզի նրանք բիզնես չանեն բհակտիի գրականությունը տպագրելու միջոցով եւ, փոխարենը, համարեն, որ այդ տպագրությունը մարդկանց օգնելու միջոց է: Նա մեզ պատմում էր. «Մանուկ հասակումս ես տեսնում էի, որ բազմաթիվ այլ ուսանողներ պատշաճ կրթություն չունեն, որովհետեւ չէին կարողանում իրենց թույլ տալ գրքեր գնել: Ես գրպանիս գումարը հավաքում էի, ինչպես նաեւ մի քանի հարուստ մարդկանցից նվիրատվություն էի խնդրում, եւ արդյունքում կուտակված գումարն օգտագործեցի, որպեսզի տանս մեջ մի փոքրիկ գրադարան պատրաստեմ: Այնտեղ մի հատված ստեղծեցի, որտեղ ուսանողները կարող էին գալ, նստել եւ գրադարանի գրքերով սովորել: Աստիճանաբար ես է՛լ ավելի շատ գրքեր

հավաքեցի՝ որոշները նոր, որոշները՝ հին: Կային ուսանողներ, ովքեր մեր տանից հեռու էին բնակվում եւ չէին կարող գալ իմ գրադարան, ուստի ավելի ուշ ես կազմակերպեցի, որպեսզի գրքեր տարվեն նրանց մոտ: Այն օրերին գրքերը հաճախակի չէին փոփոխվում կամ վերահրատարակվում, ինչպես որ մեր օրերում»:

Այս դեպքը ցույց է տալիս, որ Գուրու Մահարաջը փոքր իսկ հասակից ուրիշների բարեկեցության համար խորը մտահոգություն ուներ: Մարդկանց մեծամասնությունն ուրիշների համար այսպիսի մտահոգություն չունի, անգամ ծեր տարիքում չունի: Փոխարենը նրանք շարունակում են մտահոգվել միայն սեփական եսասիրական ցանկությունները բավարարելու համար: Բանն այն է, որ Գուրու Մահարաջն այսպիսի կարեկից մտահոգություն ուներ՝ ի շնորհիվ իր նախկին սամսկարաների՝ տպավորությունների:

«Հոգեւոր ուսուցումներ՝ տրված վնասվածքի պատրվակով»

Գուրու Մահարաջը նաեւ նշում էր. «Երբ դպրոցի ուսանող էի, մի անգամ դասընկերներիս հետ

խաղալիս վնասվեցի, եւ արյունն սկսեց գալ: Ուսուցիչն աշակերտներից մեկից իմանալով տեղի ունեցածի մասին՝ շտապեց դեպքի վայր եւ փորձեց ինձ մխիթարել: Ես ուսուցչին պատմեցի, որ մայրս ինձ միշտ ասում էր, որ ինչ էլ որ Աստված անում է՝ միմիայն մեր բարիքի համար է, հետեւաբար վնասվածքս իմ իսկ բարիքի համար պետք է եղած լինի: Ես ուսուցչին ասացի, որ դա լուրջ վնասվածք չէր, որովհետեւ մարմնի մաս չէի կորցրել, եւ որ յուրաքանչյուրը պետք է ստանա իր նախկին գործունեության պտուղները:

Փոքր տղայից նման խոսքեր լսելուց՝ ուսուցիչն ապշահար եղած ինձ ամուր գրկեց»:

«Շրիլա Պրաբհուպադի հետ հանդիպումը Շրիդհամ Մայապուրում»

Գուրու Մահարաջը մեզ պատմել էր, որ երիտասարդ տարիքից նա իր մանկության ընկեր՝ Շրի Նարայանա Մուքոպադհյայի հետ միասին իր մորական պապի հետ էր մնում: Թեեւ այդ երկու ընկերները մի տարիքի էին եւ դպրոց միաժամանակ էին սկսել հաճախել, Գուրու Մահարաջն այնքան խելացի էր, որ նրան

դպրոցում երկու անգամ մի դասարանից մյուսն են բարձրացրել, որի արդյունքում նա Շրի Նարայանա Մուքոպադհյայից երկու տարի շուտ է ավարտել: Նրանք շատ մտերիմ ընկերներ էին եւ միասին բազմաթիվ սրբավայրեր են այցելել: Դասերից հետո նրանք Կալկաթայում մի վարձակալած տանն էին մնում, որտեղ միասին հաճախ կիրտան էին կատարում:

Շրիլա Պրաբհուպադ Բհակտիսիդդհանտա Սարասվատի Թակուրի հետ իր հանդիպման պատմության վերաբերյալ Գուրու Մահարաջն ասում էր. «Մի անգամ ես եւ Շրի Նարայանա Մուքոպադհյայը ցանկացանք Շրիդհամ Նավադվիպի դարշանը ստանալ եւ մեկնեցինք Կալկաթա, որպեսզի դհամայում մի քանի օր մնանք: Մենք այնտեղ Կանչա-կամինի դհարմաշալայում հանգրվանեցինք, իսկ սնունդը տարածքի հյուրանոցից պատվիրեցինք: Շրիդհամ Նավադվիպի դարշանը ստանալու ընթացքում մենք Շրիդհամ Մայապուրում գտնվող Մահապրաբհուի աստվածությունների եւ Շրիդհամ Մայապուրի փառքի մասին լսեցինք: Ի շնորհիվ դրա՝ ինձ մոտ ուժեղ ցանկություն առաջացավ Շրիդհամ Մայապուրի դարշանը ստանալ: Երբ Շրի Նավադվիպա դհամայում

տեղի բնակիչներից Շրի Մայապուրի մասին հետաքրքրվեցինք, նրանք ասացին. «Օ՜, թանկագիններս, Մայապուրն այստեղից շատ հեռու է. եթե հիմա ճամփա ընկնեիք, մինչեւ մութն ընկնելը չեիք հասնի, եւ, երբ վերջապես հասնեիք, կպարզեիք, որ մնալու ոչ մի տեղ չկա»: Երբ այդ տղամարդը գնաց, Գանգայի ափին կանգնած մի տարեց կին շատ փափուկ ձայնով ասաց. «Բաբա՜, տեսնո՞ւմ ես. Գանգայի այն կողմում արմավենու ծառերով մի թերակղզի կա. դա Շրիդհամ Մայապուրն է: Նավադվիպի բնակիչները քեզ սխալ տեղեկատվություն տվեցին, որովհետեւ նախանձ են: Նրանց ընդհանրապես ուշադրություն մի՜ դարձրու. Շրիդհամ Մայապուրի դարշանը ստանալու համար շարունակիր ճանապարհը՝ Գանգան անցնելով»: Ես եւ Շրի Նարայանա Մուքոպադհյայը լսեցինք տարեց կնոջ խոսքերը եւ անցանք Գանգան: Երբ Շրի Չեյտանյա մաթ(Շրի Չեյտանյա տաճար) հասանք, տեսանք, որ այնտեղ տոնախմբություն էր: Մաթի (տաճարի) նվիրյալներից հետաքրքրվելուց պարզեցինք, որ Կալկաթայից մի հայտնի բժիշկ՝ Շրի Ս. Ն. Գհոշն, իր կնոջ հետ միասին, Շրի Չեյտանյա մաթի հիմնադիր-աչարյա՝ Շրի

Շրիմադ Բհակտիսիդդհանտա Սարասվատի Գոսվամի Թակուր Պրաբհուպադից դիքշա էին ստացել: Այդ նշանակալից առիթով բժիշկը եւ իր կինը, աստվածություններին, գուրուին եւ վայշնավներին ծառայելու համար, տոնակատարություն էին կազմակերպել:

Ես եւ Շրի Նարայանա Մուքոպադհիյայը տոնախմբության ժամանակ առաջին անգամ հանդիպեցինք Շրիլա Պրաբհուպադին: Երբ Շրիլա Պրաբհուպադը մեզ տեսավ, հարցրեց, թե ով ենք եւ ինչու ենք Շրիդհամ Մայապուր եկել: Մենք ասացինք, որ եկել էինք Շրիման Մահապրաբհուի շրի վիգրահայի (աստվածության) դարշանը ստանալու: Նա հարցրեց. «Նախկինում ուրիշ ոչ մի տեղ, մեկ այլ վիգրահայի դարշան չե՞ք ստացել»: «Ստացել ենք բազմիցս,– պատասխանեցի ես,– ես Հարիդվար եմ գնացել, Վարանասի, Գայա եւ այլ տեղեր»: «Կարծում ես՝ շրի վիգրահայի դարշանն իսկապես ստացե՞լ ես»,– հետաքրքրվեց Պրաբհուպադը:

Շրիլա Պրաբհուպադի հարցի ծանրակշռությունը հասկանալով՝ ես պատասխանեցի. «Աչքերովս Նրանց անշուշտ տեսել եմ, սակայն հաստատ չեմ

կարող ասել՝ իսկապես ստացել եմ նրանց դարշանը, թե ոչ»: Այդ ժամանակ Շրիլա Պրաբհուպադն ասաց. «Ո՞րն է դարշանի գնալու օգուտը, եթե ոչ իրական դարշան ստանալը: Իրականում դարշանը ոչ թե աչքերով է կատարվում, այլ՝ ականջներով: Սուրբ գրվածքներն ասում են. «ադհոկշաջա-վաստու շրավանայկա վայդհա. լսելը միակ միջոցն է, որով կարելի է ադհոկշաջային իմանալ՝ Էակին, ով նյութական զգայարանների ընկալողունակության սահմաններից դուրս է»»:

Մեզ հետ փոքր-ինչ զրուցելուց հետո Շրիլա Պրաբհուպադը մեզ խնդրեց կեսօրվա պրասադն ընդունել այնտեղ՝ մաթում: Երբ ես ընդունեցի նրա հրավերը, Շրի Նարայանա Մուքոպադհյայը առարկեց՝ ասելով. «Մենք հյուրանոցում սնունդ արդեն պատվիրել ենք: Եթե այնտեղ չերեւանք, նրանք դրանից կարող են վշտանալ»: Ես պատասխանեցի.

— Մենք շատ հաջողակ ենք: Մահապուրուշայի (մեծ անձնավորության) կողմից հրավիրվել ենք այստեղ մահապրասադ ընդունելու: Հյուրանոցի մենեջերի մասին մտահոգվելու կարիք չկա. նրա հետ մեր ունեցած հարաբերությունը միմիայն

գումարի վրա է հիմնված: Քանի դեռ վճարում ենք նրան, ամեն ինչ կարգին կլինի»:

Այսպիսով, Գուրու Մահարաջը մեզ պատմում էր, թե ինչպես է ինքը Շրիլա Պրաբհուպադին իրենց առաջին իսկ հանդիպման ժամանակ որպես մահապուրուշա ընդունել եւ թե ինքը ինչ խորը հավատ ուներ այն բանում, որ Շրիլա Պրաբհուպադի խոսքերը մեծագույն հաջողության ակունք էին:

«Գուրու Մահարաջը բոլորին միայն բարին էր կամենում»

Մինչեւ մաթին միանալը Գուրու Մահարաջը Կալկաթայում էր աշխատում, եւ ստացվեց այնպես, որ մի օր այնտեղ նրա մոտ ատամնացավ առաջացավ: Նրա ցավը արագ թուլացնելու համար Գուրու Մահարաջի կոլեգաներից մեկը նրան ծխախոտաբույս (թամբաքու) տվեց, որը պետք էր պահել լնդերի մոտ: Գուրու Մահարաջն իր ողջ կյանքում երբեք թմրանյութերի անգամ հոտը չէր առել, ուստի, երբ թամբաքուն դրեց բերանը, չկարողանալով դիմանալ դրա սուր հոտին՝ գիտակցությունը

կորցրեց: Նրա բոլոր վերջույթները կապտեցին: Մեզ թվաց, թե նա թունավորվել էր: Նրա կոլեգան ապշել էր եւ չգիտեր՝ ինչ անել: Գուրու Մահարաջը բերվեց Շամբհունաթա Պանդիտի հիվանդանոց: Երբ բուժում ստանալուց հետո նրա առողջությունն ինչ-որ չափով վերականգնվեց, բժիշկը եւ ոստիկանապետը եկան եւ հարցրեցին նրան. «Ո՞ւմ վրա եք կասկածում, որ կարող էին ձեզ թունավորել»: Գուրու Մահարաջը պատասխանեց. «Ինձ թամբաքու, ո՛չ թույն տված մարդն ընկերս է, եւ նա ինձ դա տվել է միայն իմ բարիքի համար: Մարմինս պարզապես չընդունեց այն: Որեւէ վատ մտադրություն չի եղել»:

Գուրու Մահարաջի պատասխանը լսելուց հետո բժիշկը եւ ոստիկանապետը հեռացան: Այն մարդը, ով իրեն թամբաքու էր առաջարկել, ավելի ուշ ասաց նրան. «Եթե դուք նշեիք անունս, ապա ես ոչ միայն աշխատանքս կկորցնեի, այլ այժմ նաեւ բանտում կգտնվեի»: Գուրու Մահարաջը պատասխանեց. «Ես չեմ ցանկանում որեւէ մեկի համար վնասի պատճառ լինել: Ես չեմ կարող որեւէ մեկին սխալմամբ կասկածել կամ մեղադրել: Ուրիշներին ես միայն բարին եմ կամենում եւ ուրիշ ոչինչ»: